ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N 122

6 մայիսի 2021 թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան մարզպետ

Կից ներկայացնում ենք Արմավիրի մարզի Զրառատի համայնքապետարանի 2021 թվականի ապրիլ ամսվա ճշտված որոշումները:

Համայնքի ղեկավար **Ս. Գալստյան**

կատարող աշխատակազմի բարտու ղար՝
Մ. Առաքելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՄԱՆ

28 ապրիլի 2021թ. ՈՐՈՇՈՒՄ Թիվ 17

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ և ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրառատ համայնքի Արաքսի խճուղի 19-րդ հասցեում գտնվող բնակիչուհի՝ Շահմունե Վոլոդյայի Այվազյանը (ծնված 05. 01. 1948 թիվ) դիմել է ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատ գյուղի Արաքսի խճուղի 19 –րդ հասցեում գտնվող / ըստ դատական վճռի 17. 01. 1992 թվականի/ տնամերձը 0,22 հա օրինական հողամասին , փաստացի օգտագործման 0,1130 հա հողամասում կառուցված բնակելի տան, շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով :

Հաշվի առնելով, որ բնակելի տունը և շենք շինությունը կառույցվել է մինչև 15.05.2001թ., հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, <<տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով,<<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>>Հայաստանի Հարապետության օրենքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատ համայնքի Արաքսի խճուղի 19-րդ հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի՝Շահմունե Վոլոդյայի Այվազյանը / ծնված 05. 01. 1948 թվական/. գույքային իրավունքները՝ ճանաչել նրա սեփականության իրավունքը 0,1130 հա հողամասի վրա կառուցված բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ (բնակելի տուն 42,1քառ.մ, , բնակելի ծածկոց մուտք 44,3քառ. մ, բնակելի տուն 20,6քառ.մ բնակելի պահեստ 23,5 քառ.մ / կառուցված 1960թվականին:

.Բնակելի կառույցը և շենք- շինությունը բավարարում են << ՀՀ համայնքային վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը չի ընդգրկված ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում, կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի, չեն առաջեցնում սերվետուտ:

2.Շենք_շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորման ստացած անձի կողմից:

3.Առաջարկել Հայաստանի Հանրապետության ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Շահմունե ՎոլոդյայիԱյվազյանի (ծնված 05. 01.1948 թվական) , սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված

հողամասում առկա բնակելի տան, բնակելի շենք-շինության և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի :

4 .Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ջրառատ համայնքապետ՝ Ս.Գալստյան

29 ապրիլի 2021թվական

Գյուղ Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

29.ապրիլի 2021. թիվ 18

ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի-1 կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ, <<տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35 – րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հարապետության Արմավիրի մարզպետ՝ Հ. Մաթևոսյանի 2021 թվականի մարտի 23-ի թիվ 01/7101753-2021 գրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի բնակչուհի՝ Սվետլաննա Անդրանիկի Տերտերյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրառատ համայնքի Իսահակյան փողոց 46/1-րդ հասցեում բնակավայրի գոտում գտնվող Սվետլաննա Տերտերյանի սեփականության իրավունքով պատկանող 04-085-0053-0016 կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման 285 քառ. մ հողամասի գործառնական նշանակությունը բնակելից փոխել որպես բնակավայրի հասարակական կառուցապատման հող:
2. 285 քառ. մ հողամասի վրա գտնվող 284,6 քառ.մ բնակելի շինության գործառնական նշանակությունը փոխել որպես հասարակական նշանակության՝ խանութ:
3. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության առավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Գալստյան

29. ապրիլի 2021թ.
գյուղ Ջրառատ